# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2025թ. հունիսի 17-ին, N 128-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԿՈՏԱՅՔ-4 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման, փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի թիվ 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի թիվ 208-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշմամբ սահմանված կարգի 55-րդ կետի 1-ին ենթակետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու որոշումը՝ Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 23.07.2024թ. թիվ 2-12 դրական եզրակացությունը և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 29.07.2024թ թիվ 01/11.2/11203-2024 գրությունը. ***որոշում եմ***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Նոր Երզնկա բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Կոտայք-4 համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 6/17/2025 10:54:26 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ